# ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Ուսուցչի սեփական նախաձեռնությամբ /կամավոր/ ատեստավորման թեստի**

ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**1.**ՆԱԽԱԲԱՆ
**2.**ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
**3.**ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ
ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ
**4.**ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ
**5.**ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

## 1.ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2022 թ. «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների սեփական նախաձեռնությամբ /կամավոր/ ատեստավորման թեստի կառուցվածքը, պատասխանների ձևաթուղթը և դրա լրացման կարգը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:
Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվել «Հասարակագիտություն» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը և ԿԳՄՍՆ կողմից երաշխավորված դասագրքերը:

## 2. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը կազմված է 70 առաջադրանքից, ընդհանուր միավորը 70 է, առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:
Կընդգրկվեն «Հասարակագիտություն» առարկայի 8-12-րդ դասարանների առարկայական ծրագրերի հիմնական, առանցքային թեմաները:
Թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

## 3.ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

**Առաջադրանքների տեսակները և կառուցվածքը.**
Յուրաքանչյուր հարցից հետո ներկայացված են պատասխանի տարբերակներ: Ընտրովի պատասխաններով հարցերի պարագայում ճիշտ է ներկայացված տարբերակներից միայն մեկը:
Պնդումների փնջերի պարագայում՝ հինգ տարբերակի դեպքում առկա է երկու, իսկ յոթ տարբերակի դեպքում՝ երեք ճիշտ պատասխան: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: Պնդումների պարագայում հարցին տրված պատասխանը համարվում է ճիշտ, եթե դրանում տրված են բոլոր երկու կամ երեք ճիշտ պնդումները:

**Ձևաթղթի լրացման կարգը.**

Պատասխանների ձևաթղթում յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված են համապատասխան թվով վանդակներ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել **«X»** նշանը:

Օրինակ՝ եթե առաջին առաջադրանքի ճիշտ պատասխանը 2-րդն է, ապա ձևաթղթում պատասխանը պետք է նշել հետևյալ կերպ՝

| | |
|---|---|
| 1 | |
| 2 | X |
| 3 | |
| 4 | |

*Դնդումներ համար*՝

| | | |
|---|---|---|
| 2 | 4 | 5 |

## 4. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի 8-12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի:

Ստորև ներկայացվում են առաջադրաքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

**8-րդ դասարան.**
**Թեմա 2**. Հիմնարար արժեքներ
**Թեմա 3**. Իշխանություն

**9-րդ դասարան.**

**Թեմա 2.** Հանրային քաղաքականություն. հասկացությունը, մասնակիցները, գործընթացը
**Թեմա 3.**Սահմանադրություն և Ժողովրդավարություն
**Թեմա 4.** Քաղաքացիական հասարակություն
**Թեմա 5.** Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները

**10-րդ դասարան.**
**Թեմա 6.** Գեղագիտություն: Ի՞նչ է գեղեցիկը
**Թեմա 7.** Գեղեցիկը արվեստի տարբեր բնագավառներում
**Թեմա 8.** Բարոյագիտություն: Բարոյագիտության հիմնական տեսությունները
**Թեմա 9.** Բարոյական կշռադատումներ և որոշումների կայացում
**Թեմա 10.** Հոգեբանություն: Անձ.Անձի հոգեբանական բնութագիրը: Անձի անհատական առանձնահատկությունները
**Թեմա 11.** Կոնֆլիկտը մարդու կյանքում: Մարդկային փոխհարաբերությունների հոգեբանություն
**Թեմա 12.** Ուշադրություն և հիշողություն

**Թեմա 13.** Տնտեսագիտություն: Պետության սոցիալական քաղաքականությունը
**Թեմա 14.** Միջազգային տնտեսական հարաբերություններ

**11-րդ դասարան.**
**Թեմա 15.** Իրավունքի հիմունքներ: Քաղաքացիական իրավունք
**Թեմա 16.** Ընտանեկան իրավունք
**Թեմա 17.** Աշխատանքային իրավունք
**Թեմա 18.** Քաղաքագիտություն: Պետությունը որպես քաղաքական ինստիտուտ
**Թեմա 19.** Պատերազմը և քաղաքականությունը

**12-րդ դասարան.**
**Թեմա 20.** Մտածողություն
**Թեմա 21.** Ես մարդ եմ
**Թեմա 22.** Ժամանակակից հասարակության առանձնահատկությունները և մարդու հիմնախնդիրն արդի դարաշրջանում

